



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 28 » _____ 12 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/ - 557

**Դեկտեմբերի 21-27-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Դեկտեմբերի 22-ին, 25-ին՝ առանձին շրջաններում, 23-24-ին՝ շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Անանուն լ/ք-ում՝ 26մմ, Ջերմուկում՝ 23,6մմ, Եղվարդում՝ 22,6մմ, Ամբերդում՝ 21մմ, Ֆանտանում՝ 18մմ, Աշտարակում՝ 17,2մմ, մնացած շրջաններում՝ 3-17մմ քանակությամբ: Դեկտեմբերի 21-ին, 26-27-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը դեկտեմբերի 21-23-ին բարձր է եղել նորմայից 1.1-3.3 (Տավուշում և Սյունիքում ցածր՝ 1,1-2,1), 24-ին ցածր է եղել նորմայից 1,5-2,3 (Արարատյան դաշտում բարձր՝ 1,2-2,7), 25-27-ին՝ 1,5-4,5 աստիճանով (27-ին՝ Տավուշում բարձր՝ 2,2-3,6, Իջևանում՝ 6 աստիճանով):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 21-ին: Տավուշում, Սյունիքի հովիտներում՝ +10...+14°C, Արարատյան դաշտում, Վայոց Ձորի, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում գրանցվել է +3...+8°C (Գորիսում՝ +13°C, Օձունում՝ +9°C, Թալինում՝ 0°C), Գեղարքունիքում, Շիրակում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝-1...+4°C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է դեկտեմբերի 26-ին: Շիրակում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում՝ -15...-20°C (Աշոցքում՝ -24°C, Ֆանտանում՝ -12°C, Ամբերդում՝ -11°C), Գեղարքունիքում, Սյունիքի նախալեռներում՝ -9...-14°C, (Մասրիկում՝ -24°C, Սիսիանում՝ -22°C, Գավառում՝ -18°C), Լոռիում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ -8...-13°C (Տաշիրում՝ -21°C), Տավուշում, Սյունիքի հովիտներում՝ -3...-8°C,:

Դեկտեմբերի 25-27-ին Իջևանում դիտվել է քամի 7-10մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 16-20մ/վրկ արագությամբ:

Դեկտեմբերի 27-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բլ-ում 70սմ, Ամբերդում՝ 44սմ, Անանուն լ/ք-ում՝ 40սմ, Որոտանում՝ 39սմ, Ջերմուկում՝ 26սմ, Մասրիկում՝ 18սմ, Հրազդանում՝ 16սմ, մնացած շրջաններում՝ 1-15սմ քանակությամբ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝ 1900.52մ (27.12.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 9 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան